ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«03»ապրիլի 2017 թվականի № 42-Ա

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի նիստի թիվ 53 արձանագրային որոշման 37-րդ կետով հաստատված Արևային ֆոտովոլտային կայանների կառուցման Ներդրումային ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով (Հանձնաժողով) և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին.

2.1. Ներկայացնել առաջարկություններ արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային կայանների կառուցմանն աջակցող քայլերի ուղղությամբ:

2.2. Հանձնաժողովի առաջին նիստի ժամանակ ընդունել Հանձնաժողովի աշխատանքային կարգը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարի
«03» մայիսի 2017 թվականի № 41-Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Աշոտ Մանուկյան -	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար (հանձնաժողովի նախագահ)
Հայկ Արզումանի Հարությունյան -	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ
Ատոմ Ջանջուղազյան-	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալ (համաձայնությամբ)
Վաչե Տերտերյան-	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ (համաձայնությամբ)
Տիգրան Խաչատրյան-	Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ (համաձայնությամբ)
Սուրեն Քրմոյան-	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ (համաձայնությամբ)
Աշոտ Մկրտչյան-	ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ (համաձայնությամբ)
Արթուր Վարդանյան-	Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
Հայկ Բաղալյան -	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության

	աշխատակազմի էներգետիկայի վարչության պետ
Հրանտ Գրիգորյան-	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետ (համաձայնությամբ)
Գագիկ Մանուչարյան -	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության վարչության պետ (համաձայնությամբ)
Դանիել Ստեփանյան -	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)
Մնացական Մնացականյան	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Մկրտիչ Ջալալյան	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն